

# ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ Ա. — ՇՐՋԱՆ ԺԲ.　　ՏԱՐԻ ԺԲ. — ՅՈՒՆ. 31.

## ՆՈՐ ՏԱՐՈՒ ՎԵՐԱՅ ՄՏԱԾՄՈՒՆՔ.

---

Ո՛վ կարող է արդեօք մահկանացու մարդիկների սրտի մէջը նայել եւ տեսնել թէ ինչ զգացմունքներ, յոյսեր, հոգսեր եւ ցանկութիւններ ծածկուած կան նոցա մէջ, որոնցով կողջունեն նոքա տարու սկիզբը: Այո՛, կան հազարաւոր այնպիսի մարդիկ, որոնք տարին թեթեւ կերպով, առանց երկար մտածելու կսկսեն. նոցա համար ամեն օր եւս մէկ է, առանձին մի տարբերութիւն չունի օրը օրէն: Բայց ընդհակառակն միլիոնաւոր մարդիկ կմտնեն նոր տարին ոչ առանց սրտի անհանգստութեան, ոչ առանց լաւ մտածելու եւ կասկածներ անելու թէ արդեօք այս նոր տարիս ինչ պիտի բերէ իրանց եւ իրանց սրտին մերձաւորներին համար:

Լաւ առողջ մարդը ապագայի մէջ միայն բաղդաւորութիւններ կտեսնէ իրան առաջեւը. Վախկոտը ախ կքաշէ, մտածելով ու հոգալով, որ աւելի ծանր ու տխուր օրերի կարող է հանդիպել, քան թէ այն դժուար հանգամանքները, որոնց մէջ մինչեւ այժմ կգտնուէր: Հիւանդը տխուր սրտով իրան միտքը կբերէ առաջները ուրախ անցուցած նոր տարուան օրերը, եւ կմտածէ թէ այս անգամ տարուան սկիզբը իւր համար, կա-

բելի է, վատ նշանակութիւն ունենայ։ Երիտասարդը իւր մտքին մէջ մեծ մեծ բաներ կդնէ ապագայի մէջ պատիւների հասնելու, որ իրան սրտի մեծ ցանկութիւնն է։ Չպսակուած աղջիկը հեռու տեղ, ուր որ լոյս ու մութը դեռ նոր բաժանուելու վերայ է, կտեսնէ, որ իւր համար եկող օրերի վարդերը կբացուին։ Ամեն մի մարդ իւր համար մէկ առանձին յաջողութեան, մէկ առանձին բաղդի կսպասէ մեծ յուսով, եւ այդ պատճառով սկսուող ժամանակի այն կտորը, որ իրան կեանքի համար նշանակութիւն ունեցող կտոր է, ուրախութեամբ կողջունէ, մարդ եւս կայ, որ ինչ անելիքը չգիտէ ուրախութենէն, այնչափ ինքն իրան ուրախութիւններին զուարճութիւններին կտայ։

Բայց Քրիստոսի աշակերտը այս օրուանս մէջ աւելի կփնտռէ եւ գտնել կկամենայ իրան համար մի քանի րոպէ ժամանակ, որ մէկ կողմ քաշուած հանգիստ կերպով մտածէ։ Նա լաւ գիտէ· որ իւր կեանքը մի պանդխտութիւն է, օտարութեան մէջ պտտող մարդի մի անյայտ ու անորոշ վիճակ է, շատ բաներ կարող է իր գլխին գալ, շատ եւ շատ կերպ կարող է փոխել իւր դրութիւնը։ Ամեն մի օր իրան առաջը նոր բան կհանէ, եւ նոր բան կարող է իրան պատահել շատ ու շատ անգամ։ Բայց ինչ եւս որ իր կեանքին մէջ կփորձէ, ինչ բաներ եւս որ կպատահին իրան, այդ փորձերն ու պատահմունքները չեն նորան բաղդաւոր կամ անբաղդ անողը, հապա իր սիրտն, նայելով թէ իր Աստուծոյ առաջը յստակ է թէ մեղքերով աղտոտած ու ծանրացած, նայելով թէ ի վերուստէն իր վերայ եկածը հնազանդութեամբ ու պարզ սրտով կընդունի, թէ հակառակող մեծամտութեամբ։

Ահա կանգնած է նորա առաջեւը մի նոր տարի մի անծանօթ ու ծածկած երեսի նման ծանր տպաւորութիւն անող եւ խիստ խորհրդաւոր կերպով իրան անյայտ ու անգիտելի բերմունքով։ Կանգնած է իր առաջեւը Աստուծոյ մի պատգամաւորի նման եւ բարձր ձայնով կասէ նորան մարգարէին հետ· «Ասա այս ազգին, այսպէս կասէ Տէրը· ահա ձեզ կկանգնեցնեմ ես կեանքի ու մահի ճանապարհի վերայ»։

Յիրաւի ճանապարհը կտանի կամ դէպի կեանք· կամ դէպի

մա՛հ՝ երկու ճանապարհ կբաժանուի մեր առաջը՝ դէպի աջ եւ դէպի ձախ։ Երկուքի մէկը պիտի ընտրենք. ժամանակն, որ առանց ամենեւին կանգ առնելու անդադար յառաջ կերթայ՝ մեզ եւս կստիպէ կմղէ դէպի յառաջ։

Ճանապարհ ցուցանողներ կան մեզ հետ. որը գլխով կանէ թէ դէպի աջ երթանք, որն ձեռքով կանէ թէ եկ դէպի ձախ բռնենք մեր ճանապարհը. բանականութիւնն ու հաւատը այն կողմը կկամենայ որ երթանք, թեթեւամտութիւնն ու զգայական սէրը այս կողմը երթալը լաւ կհամարի։ Նոցանէ ամեն մէկը բաղդաւորութիւն մեզ պարգեւել պատրաստ է, եւ երկուքն եւս իրանց տալիք բաղդաւորութեան տեղը մեզնէ զոհ կպահանջեն։ Բանականութիւնը եւ հաւատը կասեն մեզ թէ զոհէ ներկայն յաւիտենականութեան համար եւ ամենամաքուր գոհ վճակը քան կլինի, ոչ մի բանի կարօտութիւն, պակասութիւն ու տրտունջ չես ունենար։ Իսկ թեթեւամտութիւնը եւ զգայական ցանկութիւնն եւս կասէ. զոհէ ապագայն ներկային, ինչ որ կայ այժմ, այն առ, ինչ որ պիտի ստանաս, այն մնացող թող լինի այժմ ստանալու բաղդին. մարմնական ցանկութիւնների քաղցրութեան բաժակը մինչեւ տակն ու տակուցքովը կարող ես խմել, դատարկել, բայց միայն խղճմտանքի հանգստութիւն չպիտի ունենաս կերեւի։

Այսպէս մեր առաջեւն են դրուած թէ օրհնութիւն թէ անէծք, պիտի ընտրենք, որը մեր սիրտը կկամենայ։ Մենք սկսած ենք նոր տարիներ առանց այսպիսի երկար, ծանր ու խոր մտածմունքներու, առանց առջեւ եւ ետեւ միտք անելու, օրը անցուցինք ու տարին եւս հետը եւ ամեն բոլէն ինչ որ կտար մեզ եւ ինչ հեռացող եւս կտար, վայելեցինք։ Բայց մեր կեանքն եւս առանց ապաշխարանքի անցուցինք։ Ինքդ տես ու հասկացիր, թէ որքան բան դիտես եւս կոյակացի քեզ գոհ ու անկարօտ լինելուդ համար։ Մեղքը քո էր, թէ քո Աստուծունը։

Այսպէս կասէ Աստուած. քեզ կեանքի ճանապարհի առաջեւը կանգնեցուցած եմ։ — Հաստատ մտքով հաստատ կամքով կարող ես այդ ճանապարհը բռնել, այդ ճանապարհը ընկնել ու երթալ. եթէ կարող ես, միտքդ դիր որ տեւողական բաղդաւորութեան կարժանանաս։ Այս ճանապարհի մէջ

*ոչ սիրտդ չարչարող, միտքդ տանջող տպաւորանք կգտնես, ոչ շատ գործ բռնելուդ վերայ դառն ափսոսանք, եւ ոչ մտքիդ դրածները չյաջողելուն համար տխրութիւն: Այս ճանապարհի վերայ ամեն զրպարտութիւններին կդիմանաս, քաջութեամբ կտանես, ծուռ ու պաղ աչքով վերադ նայուած միջոցին, սըրտիդ ուրախութիւնն ու հանգստութիւնը չես կորցներ, մինչեւ անգամ աղքատութեան մէջ քեզ հարուստ կզգաս, հիւանդութիւններու մէջ ցաւերդ համբերութեամբ կքաշես, այն աստիճանի կհասնիս, որ, եթէ քո կուրծքիդ վերայ մարդիկների մէջ քեզ ամենասիրելին եւս մեռնի, անպատմելի երջանկութեան զգացմունքով կրկին տեսնուելու յոյսն կունենաս: Սորանէ աւելի ինչ փառաւոր բան կարող ես դու պահանջել մեր այս աշխարհիս մէջ ունեցած կեանքէն: Բաղդաւորութեան միւս ամենայն պարգեւներն, միւս ամեն գեղեցիկ ժամերն, որ Աստուծոյ նախախնամութիւնը քեզ համար կպատրաստէ, թերեւս մէկ յաւելուած կլինին այն անչափ գանձերին ու ուրախութիւններին, որ պիտի գտնես կեանքի այս ճանապարհի վերայ:*

*Հասկացա՞ր այժմ արդեօք այդ ճանապարհի որպիսութիւնը, թէ արդեօք այստեղ այժմ քեզ ասածներս մի պաղ քարոզի նման բան երեւեցաւ, ինչպէս որ շատ անգամ կլսենք սովորաբար: — Կցաւիմ վերադ. բայց առաջուանէ կասեմ քեզ մարգարէի նման, որ կեանքիդ մէջ այնպիսի մի ժամ կգայ, որ մի երկնքէն վայր ընկնող կայծակի նման, յանկարծ զարհուրեցնող մի լոյս ու պայծառութիւն կձգէ այս խօսքերիս վերայ: Այսօր կկարդաս դու այս տողերս եւ անհոգ ձեռքէդ վայր կդնես. բայց քո կեանքիդ մէջ այնպիսի մի ժամ կպատահի քեզ, որ քեզ սարսափեցնելով այս ասածներիս վերայ կհամոզէ ու խօսքերս ընդունել կտայ: Այսօր կարելի է, սիրտդ ուրախ է, եւ չգիտես թէ անբաղդութիւնը որտեղէն պիտի գայ քո վերայ. բայց ի՞նչպէս կլինի, եթէ որ դու այս նոր մտած տարուանդ մէջ պատուէդ ընկնիս, անունդ կորսուի, եւ քո թշնամիներդ վերադ ծիծաղեն: Ի՞նչպէս կլինի, որ այս տարին քեզ համար այն անբաղդութեանդ տարին լինի քո կեանքիդ, որ դու քո ընտանիքիդ հետ աղքատութեանը մէջ կընկնիս, որ*

բնաւ տեսած ու իմացած չես թէ ինչ բան է։ Ի՞նչպէս կլինի եթէ որ այս տարուանս մէջ քո սրտից այս աշխարհիս երեսը ամենասիրելի մարդի դիակը տեսնես։ Ի՞նչպէս կլինի, եթէ որ մահի հիւանդութիւնից անգամ այլ եւս այնքան հեռու չլինի քեզնէ, քան թէ ինչպէս որ դու այսօր կկարծես, եւ քո ընտանիքից արտասուքով յաւիտեան աչքդ փակես աշխարհիս։ — Այժմ կհասկանա՞ս ո՛րն է կեանք գտնելու ճանապարհը, որի մէջ դու ամենայն չար պատահմունքէ, փորձանքէ բարձր լինելով, մի անպղորդ, անապական ու հաստատ բաղդաւոր վիճակ կարող ես ունենալ, թէ եւ անբաղդութեան եւ փորձանքների մրրիկներն եւս իրանց անելիքն անեն։

Մինչեւ ցայսօր գնացած ճանապարհդ թող, նորա վերայ քեզ ամենահարկաւորն մնացական բանը, որ գոհ սիրտն է, չպիտի գտնես։ Մեռիր անցած ժամանակի համար, փոխուէ, նոր, աւելի լաւ մարդ եղիր, հոգիդ Քրիստոսի հոգու հետ կապէ, միացրու, որ քեզ հետ խօսի ու կապէ քեզ. Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւնը։

Մեր հոգին աստուածային հոգու հետ միացնելը կլինի ընդունելով նորա հեզ ու մարդասէր վարքն ու առաքինութիւնները, հեռացնելով մեզնէ մեր սրտի սխալանքները, եւ Աստուած սիրելով։ Այն ժամանակ կլինի այս, երբ որ մենք մեզ ուրանանք, երբ որ մենք մեր աչքերը ուրախութեամբ երկրէս դէպի երկինքը ուղղենք, եւ շատ անգամ մեր միտքը բերենք, մինչեւ անգամ մեր ամենօրեան գործերի մէջը, մեր բարեկամների ընկերութեան մէջ, մինչեւ անգամ երկրաւոր բարիքը մեր վայելած ժամին, որ անմահ ու յաւիտենական հոգին, որ մեզ կեանք ու կենդանութիւն կտայ, այս աշխարհի քաղաքացի ու բնակիչ չէ, հապա մի օտարական, մի պանդուխտ ճանապարհորդ է դէպի իր հայրենիքը, դէպի Աստուծոյ այն գեղեցիկ աշխարհը։

Մինչեւ այժմ դեռ եւս չհասկացա՞ր այս ճանապարհի որպիսութիւնը։ Մինչեւ այժմ դեռ եւս չփորձեցի՞ր ոտք դնել այդ ճանապարհի վերայ, կատարեալ մարդի պէս մտածելով բռնել այդ ճանապարհն ու երթալ միշտ հաստատ քայլերով, առանց ծռելու. ուրեմն այս նոր տարուս սկիզբը փորձէ, ո՛վ մարդ,

որ շատ բան փորձած ես, որ երկարատեւ ու ուրախ կեանք ու- նենաս. եթէ որ այն ժամանակ այժմ սկսած տարուդ վերջումն սրտով աւելի գոհ ու շնորհակալ չլինիս ինքդ քեզնէ, եթէ որ մարդիկներէ աւելի սիրուած չլինիս, եթէ որ գլխիդ եկած վատ բաներէն անվնաս ու անփորձ մնացած չլինիս, եթէ որ քո սիրտդ քեզ չվկայէ, թէ անբաղդութիւններիդ եւ փորձանքներիդ ոչ մի նետը չկարողացաւ քեզ խոցել եւ ոչ մի զէնքը քեզ վի- րաւորել, այն ժամանակ կրօնը մի առասպել է, սուտ եւ Քրիս- տոսի խոստմունքը պարապ երազ։

Բայց թէեւ ու շատ մերձեց եղող, թաշող դիտաւորու- թեամբ մի մտներ կեանքի ճանապարհը, այլ այն ճամբը մեզ հաստատ կամքով ու մտքով տանող որի այս աշխարհքիս ե- րեսը ոչ մի մեծ ու կատարեալ բան անել կարելի չէ. Կարելի է, որ քո պակասութիւններդ, թուլութիւններդ, սխալներդ մտա- կէնդ ամմառէն կճանաչես. Միջոց մեր անդադարութիւնն է գլխաւոր արգելքը ինքներս մեզ ճանաչելու. Նորա համար քննէ քո սիրտդ ու հոգիդ, քննէ քո անցուցած կեանքդ համա- ռօտ կերպով, եւ երբ որ դու թագնուած թշնամին քո սրտի- խորքին մէջ կգտնես, քաջութեամբ հետը կռուէ, հարուած- ներ տուր իրան. Նա էր քո համառութեան թշնամին, նա էր քո սրտի խաղաղութիւնը խանգարողը. Ձեռքեդ մի թողուր դուրս գալու այնպէս ճնշէ, այնպէս այժմ կարէ, որ այլ եւս քո խղճմտութեանդ տակէն քո կամքէդ դուրս գալ եւ իր կոր- ծանել անել չհամարձակի, գիտենալով որ ինչ մեծ այժմ ինչ մեծ ապրեցութիւն ունիս վերան, որ առանց քեզ շարժել կարող չէ. Ամենեւին պէտք չէ պակասի քո սրտի այժմս կորած- թիւնը, քեզ վերայ արթուն մնալէն ամենեւին չպիտի յագենաս թուլանաս, եւ եթէ մոքեդ անցնի մի ժամանակ, թէ անկարելի է որ ինքդ քեզ յաղթես, այնչափ այժմ չունիս, որ մեղքին դէմ դնես, այն ժամանակ Նորան ընկիր, որ այնպէս մխիթարող խօսքերով մեր սիրտը միամիտ կանէր. «Ես յաղթեցի աշխարհի»։ Եր- բէք մի մոռանար քո աղօթքդ քո երկնաւոր Հօրդ. Նա ուրա- խութեամբ կլսէ իր զաւակներին աղաչանքը։

Մի նոր տարի մեր առաջեւն կանգնած է ծանր ու բոլորովին խորք չհասցնելու չափ խորհրդաւոր կերպով թէ ինչ կբերէ

արդեօք մեզ ի՞նչ հետք կանգնած է մեր առաջին Աստուծոյ պատգամաւորի ձեռն. մարգարէի ձայնով կլսուի մեզ հետ ու կասէ. Ինչո՞ւ եք կորնչիք, յետ դարձէք մեռնելու ճանապարհէն վերայ ու կենդանելոյ ճանապարհին վերայ։

Այսօր մեռնելու ճանապարհն ես իմ առաջեւս կտեսնեմ ով Նոր տարին, քո առաջին ժամերում. Ամեն մի րոպէ մի քայլ է դէպի գերեզման. Բայց իմ աչքս մի ուրիշ աւելի զարհուրելի մահ եւս կը տեսնէ, այս մարմնի մահը, մեռնելը չէ, հապա հոգւոյ մեռնելն։

Մահի ճանապարհը չեն ճանաչեր արդեօք. դէպի մեղքը տանող ճանապարհն է։ Մեղքը իմ հոգին կորցնողն է. նա իմ մարմինս ինձ արդեն հողու համար գերեզման կանէ։ Արթուն չկեցողը քնի մէջ է. գործի վերայ չեղողը ձեռքերը, ոտքերը կապած մարդն է։ Հոգին, որ աստուածային մի օրէնք իւր մէջը կկրէ, մեռած է, երբ որ մեր մէջը միայն մարմինն ու արիւնն է յառաջացած ցանկութիւնները գործ կանեն. մեր հոգին մեռած մի բան է, երբ որ յաւիտենական կեանքի տեղը բաղձական վայելչութիւններն են մեր նպատակը. երբ որ ոչ թէ Աստուծոյ, հապա փառաւորած բաների բոլոր սրտովս կպած եմ. երբ որ ես ինքս ինձ բռնելու տեղը, մտքի ու կամքի հաստատութիւն ունենալու տեղը, անարատ անբամբաս վարքի, մաքրութիւն, արդարասիրութիւն ունենալու տեղը իմ մէջս միայն թուլութենէ յառաջ եկած մի խելօքութիւն կտեսնեմ, որ հանգամանքներին կյարմարեցնէ կեանքս ու գործերս։

Ճանաչես մահի ճանապարհը. — Յետ նայէ, ով հողեղէն մարդ, այն ճանապարհին վերայ, որտեղէն որ դու եկար եւ որի վերայ կանգնած ես քո կեանքիդ մի նոր տարւան սկզբրում. Անցած տարի անշուշտ գործ կատարած կլինիս, այլ եւ տէր կերպով աշխատելով, բաներ յառաջ բերած կլինիս։ Կարելի է, որ պատուաւոր եւ անխարդախ կերպով գործ տեսար աշխատասիրութեամբդ, որ քո հացդ վաստակես, ունեցածդ աւելացնես, անտարակոյս եմ, որ ոչ ոքի սուտ ասած չես, գողութիւն արած չես, մարդ խաբած չես, հասարակաց օգտակար այսպիսի գործի մէջ քո լումայդ խնայած չես, մասնակից

եղած ես՝ խղճալով այս այն կարօտ մարդկին օգնութիւնդ հա-
ռուցած ես՝ որովհետեւ կակուղ ու փափուկ սիրտ ունեցող
մարդ ես ու չես կարող ուրիշի անբաղդութիւնը տեսնել ու
չմեղքնալ նորան՝ թշնամուդ հետ հաշտուեցար՝ որովհետեւ
քեզ համար աւելի օգտակար էր այդ՝ որ քո միւս նպատակ-
ներիդ հասնելու համար նորա կողմէն արգելքներ չգտնես.
այս ու այն մարդի բարի խորհուրդ տուիր՝ որովհետեւ խոր-
հուրդ տալը քեզ համար բան չէր արժեր՝ ու դու այնով սո-
րան նորան պարտաւորեցրիր։ Բայց այս ամենայն բանը արած
ժամանակդ ինքնդ կեանքի ճանապարհի վերայ կգտնուէի՞ր
արդէն։ Այս ամենայն առաքինութիւններդ արդարեւ ամենա-
մաքուր սրտով միշտ Աստուած սիրելուդ ու ընկերդ՝ քեզ նման
մարդը սիրելո՞ւդ պտուղներն էին՝ թէ՞ արդեօք շատ անգամ
քո ունայն փառք վաստակելու ցանկութեանէդ ու քո անձնա-
սիրական հաշիւներ անելէ՞դ յառաջ եկան։

Ձեռքդ սրտիդ վերայ դիր եւ միտքդ բեր ամենագէտ Աստու-
ծուդ՝ որ քո սրտիդ մէջն կտեսնէ ցօղի մի պարզ ու յստակ
կաթիլի նման՝ ու ինքնդ քեզ պատասխան տուր ճշմարիտ ու
իրաւը ճշմարիտ մարդի նման. արդեօք այնպէ՞ս բարի էիր՝ ինչ-
պէս որ մտքումդ դրած էիր լինելու։ Հեռու պահեցի՞ր քեզ
միշտ այն բանէն՝ որ քո լաւ զգացմունքդ չէր ընդունիր ու
կմերժէր իրմէ։ Թողի՞ր արդեօք այն սխալանքներդ՝ որ ու-
րիշների վերայ չորս աչքով կտեսնէիր՝ ու լաւ մեղադրելը գի-
տէիր։ Քո սովորական ու սիրած մեղքերդ նորէն ոյժ առած
ու զօրացած քո վերայ երեւան չեկա՞ն արդեօք։ Երբ որ ամե-
նայն բան բարկութիւնդ կշարժէր՝ հեզ ու խոհեմ մնալ կա-
րողացա՞ր արդեօք։ Օգնեցի՞ր արդեօք այնտեղ՝ որտեղ որ քեզ
օգնել կամեցած չէի՞ն։ Որտեղ որ գայթակղութիւնը կհրա-
պուրէր քեզ սաստիկ ու խիստ վտանգաւոր կերպով քեզ կը-
սպառնար՝ կարողացա՞ր արդեօք քո հոգու մաքրութիւնը ան-
վնաս պահպանել։ Կարողացա՞ր արդեօք քո անձի օգուտը մո-
ռանալ՝ երբ որ քո օգուտէդ ձեռք քաշելով ուրիշի օգուտը
ամուր հիմնէիր ու հաստատ ճանապարհի վերայ դնէի՞ր։ Կտես-
նեմ՝ որ ձայնդ դուրս չգար՝ կարմրեցար։ — Յետ նայէ այն
ճանապարհի վերայ՝ որով կերթաս՝ կեանքի ճանապարհ չէի՞ր

բռնած, հապա մահին։ Այս տեղէն է ուրեմն քու մինչեւ այժմ անպտուղ ջանքդ ու աշխատութիւնդ հանգստութիւն, գոհ սիրտ եւ գտնուած վիճակիդ հնազանդութիւն ունենալու համար, որ ձեռք բերել չկարողացար։ Ահա այստեղէն էին իմ անցած տարի ունեցած շատ ու շատ անհաճոյ րոպէներդ, դժգոհութիւններդ ու տրտունջներ։ Ոյժ ու զօրութիւն չունէիր մէջդ ճշմարիտ առաքինութեան համար, եւ այդ պատճառով այս ու այն կողմը կհակէիր, կտատանէիր անհաստատ մտքով ինքդ չգիտենալով, կամ չկարողանալով որոշ կերպով վճռել քու մէջը թէ որ ճանապարհ բռնես ու ինքդ քեզ կխաբէիր։

Այ՞ժմ եւս քու հին կիրքերիդ հին ճանապարհը պիտի բռնես ու երթաս։ Պիտի բարին անելու համար նոր նոր մտադրութիւններ ունենաս նորա համար, որ մօտ օրերս մէջը կամքդ դարձեալ կորուի թուլանայ, դէպի վատը ծռելով ու մտքիդ մէջ դրածները մտքիդ մէջն եւս մնան ու ոչնչանա՞ն։ Այն ժամանակ տարուս վերջում նորէ՞ն պիտի տանջէ ու չարչարէ քեզ այն միտքը թէ ինչ որ խոստացար, չկատարեցիր։ Մի տարի կորուսիր քու խղճմտանքիդ համար, Աստուծոյ արքայութեան համար։ Մի տարի ասենք ու չանցնենք. մի տարին փոքր մի բան չէ, մեր երկրաւոր կեանքի համար տրուած ժամանակի մի նշանաւոր կտորն է, որի համար այս մի օր հաշիւ պիտի տանք։

Ո՛չ, իմ Աստուածս ու Հայրս, ես կճանաչեմ այն ճանապարհը, որ դէպի կեանքը կտանի, այն ճանապարհը, որ դէպի քեզ կբերէ։ Քրիստոսի հոգով ապրելն է միմիայն ճշմարիտ եւ ուղիղ ճանապարհն։ Եւ այս օրէս ի վեր ես պիտի այդ ճանապարհը բռնեմ, այդ ճանապարհը երթամ ու չհեռանամ նորանէ ամենեւին։

Կարո՞ղ էի արդեօք այս մեծ նշանակութիւն ունեցող ժամիս մէջ, երբ որ տարին կսկսուի, նոր գալիք կեանքի բաժանուելու ճանապարհի վերայ մի աւելի արժանաւոր բան անել, քան թէ Քո առաջիդ, ամենագէտ Աստուած, Քո առաջիդ, որ իմ կեանքիս Դատաւորն ես, այնպիսի բաներ մտքումս դնեմ անկլու-անպատճառ, որ ինձ մահէ ազատէ եւ այս ու այն աշխարհի դերագոյն երջանկութիւնները տայ։ Բայց մտքում բարին դնելը դեռ եւս մարդս չազատեր, հապա մտքում դրած ամենայն

բարին պէտք է միշտ գործով կատարել, բռնած ճանապարհէն ոչ մի ժամանակ եւ ոչ մի կերպով չշեղուիլ: Ո՛վ իմ Աստուած, իմ երկնաւոր Հայր. Քո ողորմածութեանդ ծածկէ իմ մինչեւ այժմ անցուցած կեանքս. Քո սուրբ Հոգիդ տուր ինձ յարատու-հեաւ անցնելու կեանքիս համար:

Եւ մի օր այս տարուս վերջին — եթէ որ Քո կամքդ լինի որ ողջ մնամ, — նորէն յետ դիտել նոյնիմ այն ճանապարհին վերայ, որ բռնած կերթայի. Վստահ զգուշութեանս որ հաստատուէ մեզ մեր մաքուր սրտի գիտակցութիւնն, մեզ նման մարդկիների ամեն սէրը, որ կաշեցան մեր վերայ, այն անպատմելի ուրախութիւնը, որով մեր սիրտ լցուած կլինի այն ժամանակը, որ Քեզ վերայ կմտածենք Քեզ աղօթք տալած մինչդին, մեր հոգուն կլինուցնէ թէ՛ արդեօք Քրիստոսի ցուցած ճանապարհովն եւ Նորա համար ապրած ենք, ու Քեզ ընդունելի էր արդեօք մեր անցուցած կեանքը:

(Թ.....)

---

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ ԿՆՈՋ ԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Քրիստոնէութեան յառաջ բերած նորանոր կրօնական եւ բարոյական հանկացողութիւնների ընդհանրապէս փոփոխելով հին կեանքի ամբողջ ուղղութիւնը պէտք է յատկապէս փոփոխէին արմատական կերպով եւ կնոջ դրութիւնն ու կըրթութիւնը: Բայց քրիստոնէական հայեացքների համար դըժուար էր պատուաստել հին, միանգամայն ինծաբարոյ հասարակութեան մէջ, հին ու նոր գաղափարների մէկմեանց դիմադրութիւնը պատճառ եղաւ ոչ միայն արիւնահեղ, այլ եւ բարոյական ղոհերի: Դարերով արմատացած մարդկային թերութիւնները եւ մոլորութիւնները կեանքի մէջ շարունակաբար կցանգուէին անտարբանական մաքուր եւ սուրբ հակացողութիւնների հետ: Գերմանական ցեղերն իրանց բարեբարոյութեամբ կներկայացնէին ըստ երեւոյթին, քրիստոնէութեան համար բարեբեր երկիր: Մի կողմից այդ Գերմա-